Աֆրիկայի ասիական խճուղին (չօսէն) կանգնի ուշ պարզերին, ինչպէս են պ. պ. Նիկոլաձէ և Միհէսնեանց.

—

Պ. Գրիգոր Աթեան և Ս. Շուշանիի (Ամանդուսա) Աթեան ուղարկելով մեզ 14 ր. յոգուտ վնասուածների սովտատնչների, գրում են մեզ հետևեալը. «Ինչպէս որ խոստացած էինք «Մշակի» № 23 մէջ մեր գրած նամակում, ահա ուղարկում ենք ձեզ մարտ ամսի մեր ապրանքի 5%, որն անում է 14 բուբլի. խնդրում ենք այդ փողը հասցնել ի վասպուրականի մեր սովտանչ եղբայրներին և քոյրերին»։

—

ԹԻՖԼԻՍԻՆ բնակվող պ. Մկրտիչ Տէր-Մկրտչեանց ուղարկել է մեզ 13 բուբլ յոգուտ Վանի սովտանչների, որ նա ժողովել է հետևեալ անձինքներից,—տիկին Մարիամ Ազգատեանից 10 ր., իշխանուհի Մարիամ Զուսէվիան Տարիան-Մաուրովով 2 ր., և Մկրտիչ Տէր-Մկրտչեանց 1 ր., ընդամենը 13 բուբլ։

—

ԿԱՏԱՎԻՆ պ. Բարուրով ուղարկել է մեզ 10 բուբլ, որպէս զի մենք հասցնենք այդ փողը Վանի սովտանչներին։

—

Հինգշաբթի, ապրիլի 3-ին, ԹԻՖԼԻՍԻ Թատրոնում արվեցաւ մի կենդրան յոգուտ Թիւրքիայի հայ սովտանչների։ Մասնակցում էին տիկին Գամարով, օրիորդ Խոսրովեվ, օրիորդ Սիրանուշ, պ. պ. Ադամեան, Մէլմոն, Մանդինեան և ուրիշներ։ Որկէսզի ածեց Զուլաֆիեանցի «Արչակ II» օպէրայի ուվերտիւրան, իսկ օր. Սիրանուշ երգեց պ. Կորդանովի մի բանաստեղծութիւն։ Կարգադրողները աշխատեցին կազմել կենդրէոնը այնպէս որ կատարված պիէսների մի քանիսները հայ հեղինակների գրուածներ լինեն։ Տիկին Գամարովի և օր. Խոսրովեվի երաժշտական գեղեցիկ ընդունակութեան մասին մենք ասելիք ենք համարում խօսել։ Նրանց խաղը որդէն յայտնի է Թիֆլիսցիներին։ Կենդանի պատկերները, մեր կարծիքով, չատ անաջող էին և ոչինչ տպաւորութիւն չը թողեցին հանդիսականների վրա. սոված մարդիկ ու կանայք ձոր հագուստներով, յետոյ փոխանակ ցոյց տալու ինչպէս բաւականութիւն են ստանում սովտանչները, մեր աչքի առջև ներկայացաւ հին հեռանչական կամ յունական չգեղ ինչոյզ։ Որքան է եղել երեկոյի զուտ արդիւնքը,—մեզ յայտնի չէ։ Բայց ասում են եղել է զուտ արդիւնք 100 բուբլ։

—

Ասում են որ ապրիլի 3-ին Թիֆլիսի թատրոնում յոգուտ սովտոց տուած կենդրէոնի մասնակցողները վճարեցին գաղիոնի համար Թիֆլիսի հայոց թատրոնական կոմիտէին 300 բուբլ։ Այդ օրը կոմիտէի ներկայացման օրն էր, իսկ յայտնի է որ կոմիտէը վճարում է Գալմին 200 բուբլ իւրաքանչիւր երեկոյի համար։ Այժմ, չը նայելով որ կենդրէոնը բարեգործական նպատակով էր, այն էլ յոգուտ Վանի սովտանչների, կոմիտէը չը բաւականացաւ պահանջելու իր 200 բուբլ կենդրէոնի տուղներից, այլ ուելացրեց դարձեալ 100 բուբլ չան։ Բաւական չէ որ կոմիտէը մինչև այժմ ոչինչ չը տուեց յոգուտ Վանի սովտանչների, բայց ուշաստով է չանվել երբ ուրիշները այդ նպատակով կենդրէոն են տալիս։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳԻՐԱՆՈՒԹ

Փարիզում հրատարակվող կղերական ուղղութեան «Univers» լրագրի մէջ տպված է հետևեալ նկատողութիւնը։

Մի քանի լրագիրներ հաղորդում են, որ անհատներ, պատգամաւորներ և հոգևոր միաբանութիւնների ներկայացուցիչներ խորհրդակցում են ֆրանսիական կառավարութեան վերջին հրամանների առիթով։ Ճշմարիտ է այդպիսի խորհրդակցութիւններ եղել են և դարձեալ կը լինեն։ Այժմ մենք դրանից առելի ոչինչ չենք հաղորդի, այսքանը միայն կասենք, որ կատարեալ համաձայնութիւն է տիրում այդ անձինքների մէջ և որ նրանք եռանդով կընդդիմանին կառավարութեանը։ Բերլինում հրատարակվող «National-Zeitung» լրագիրն հետաքրքրում են, որ պապը բողոքել է ֆրանսիական կառավարութեան վերջին հրամանների դէմ և հրաժարել է իր ներկայացուցչին որ նա զգոյշ լինի, չունենալ իր յարաբերութիւնները կառավարութեան հետ, բայց մի և նոյն ժամանակ հոգևոր միաբանութիւնների անդամներին խորհուրդ էր տալ հանգստվել կառավարութեան հրամանին։ Պապի բողոքի մէջ ցաւակցութիւն է յայտնած ֆրանսիական կառավարութենից վերջին ժամանակներում հոգևորականների վերաբերութեամբ գործ դրած միջոցների առիթով։ Պապը, ինչպէս երևում է, չէ ցանկանում, որ Ֆրանսիայի և Հռոմի դիպլոմատական յարաբերութիւնները ընդհատվին։ Իսկ կղերականները աշխատում են գործը այդ վանմանին հասցնել։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 4 ապրիլի։ «Правит. Вѣстн.» լրագիրը հաղորդում է, որ Կուրանովի և Տիրկէ հիմնելազոր զուտոների գլխաւորները էր որ հրամայած է այլ ևս չը գործածել սպանական ձեվ հարուածող զորձանաներ։

ԹԱՒՐԻԶ, 3 ապրիլի։ Թագաւոր Կայսրը, կոմս Լօրիս-Մելիքովի առաջարկութեան համաձայն, կատարեալ ներում շնորհեց գինուորական դատարանից դատապարտված Վանաց-կով, Սուտէյլիին և Զուգասվ Համբարձումին ուսանողներին։ Այդ ուսանողները մեղադրվում էին յանցաւոր պրոպագանդային մասնակցելու մէջ։ Իշխան Գորչակովի առողջութիւնը առաջվայ դրութեան մէջ է։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 4 ապրիլի։ Պետական բանկի 5% առանցին առաջին չորքանի արժէք 93 ր. 87 կ., երկրորդ 92 ր. 75 կ., երրորդ 93 ր. 50 կ., չորրորդ 93 ր. 12 կ., ներքին 5% առաջին փոխառութեան տասնակը արժէ 22 ր., երկրորդ 221 ր. 25 կ., արևելեան առաջին փոխառութեան տասնակը արժէ 91 ր., երկրորդ 91 ր., երրորդ 91 ր. 12 կ., ոսկի 6 ր. 75 կ.։ Ռուսաց 1 բուբլ Լոնդոնի վրա արժէ 25,28 պենս, ռուսաց 100 ր. Համբուրգի վրա 215 մարկ 50 պֆ., Փարիզի վրա 275 ֆր. 50 սանտ։ Բօրսայի տրամադրութիւնը հանգիստ է։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 5 ապրիլի։ «Правит. Вѣстн.» լրագիրը հաղորդում է, որ Թագաւոր Կայսրը հաստատութիւն տուեց Կարգադրող Բարձր Մասնաժողովի կարգադրութեան նը պօլիցիայի հսկողութեան տակ եղած և վարչական ձևով արտաքսած անձինքներին վերարերեալ տեղեկութիւնները վերաքննելու համար։ Կարգադրութեան նպատակն է թեթևացնել միշտ անձինքներից, մանաւանդ ուսանողներից, նրանց գրութիւնը, որոնք նահանգապետների վճռութեան համաձայն, խոստովանելն իրանց յանցանքը։ «Правит. Вѣстн.» հաղորդում է, որ վարչական ձևով արտաքսելու մասին Սրեձկեան Սիրիրի զլխաւոր նահանգապետին նոյն իրաւունքներ են տուած, ինչ որ տուած էին ժամանակաւոր գլխաւոր նահանգապետներին։ Իշխան Գորչակովի առողջութիւնը առաջվայ դրութեան մէջ է։

Կ. ՊՕԼԻՍ, 3/15 ապրիլի։ Պրիզրենի մօտ երևեցան այրանցի գինուորված խումբեր։ Մուխտար-փաշա գնում է նրանց ցրվելու համար։

ԲԵԼԳՐԱԴ, 3 ապրիլի։ Արնաուտները մտան Սերբիա, Բուգոշինի մէջ վերցրին զէնքերի և պարարի պահեստները։ Սերբիան Թիւրքիային եռանդոտ բողոք ներկայացրեց։

ԼՕՆԴՈՆ, 7 ապրիլի։ Ասսոր Բիկոնսֆիլդ ներկայացրեց Թագուհուն իր հրաժարականի մասին խնդիրքը։ Թագուհին ընդունեց նրա հրաժարականը։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

առանց գէֆիֆ չի անցկացնի, նրան կը զուարճանեն և նրանից փողը կը ստանան։

Նուստով յայտնվեցան ալչակիները, գլուխ տուեցին և չարունցան սեղանի չուրը։ Ջանտիկիները այժմ տիպված էր կերակուրների քանակութիւնը ուելացնել։

Էֆէնդին թարեւանեց հարցնել ալչակիներից ազգութիւնը։

—Ձեր Նորին ամենայն էլ լաւ ենք, պատասխանեցին նրանք։

Երբ կերան, խմեցին, կշտացան, վառվառէն կրկին դուրս եկաւ իր թագատի տեղից և սկսեց սեղանը հաւաքել։ Բայց արաքի մեծ ամանը անշարժ մնաց իր տեղումն։ Նա արդէն մի քանի անգամ դատարի գլխաւորն էր գնացել և վրը յետ դարձել։ Բաժակները չարունակ պարբերվում էին։ Ալչակիներին գլուխներն էլ տաքացան։

—Հիմա սկսեցէք, հրամայեց էֆէնդին։

Նրանք սկսեցին։ Փոքրիկ խրթիթը կենդանացաւ տափակ երաժշտութեան խառնաշփոթ և ողբալի հնչիւններով։

Էֆէնդին գնդվում էր իր տեղի ամենավերջի տրամադրութեան մէջ։

Քանի բարձրից յետոյ արենաստուր Պետրոսի խրթիթ չուրը և կուտի վրա հաւաքվեցան դրամի կիսիները, աղջիկները, և սկսեցին երգիչներից ու լուսատուներից նայել, և զուարճանալ նեղագանգուեան ձայներով։ Ոչինչ ախրան չէ ուրախացնում գիւղացի կնոջը որպէս երաժշտութիւնը, որին նա չար կարօտ է մնում, միայն ձմեռը հարսանիքների ժամանակ լսելու բախտ ունենալով։

Փոքր առ փոքր ամբիոնը տաքացաւ և ուելի բաղդրելով կերպարանք ստացաւ։ Արաղի արբեցութեան և ալչակիներին նուազածութեան ձայնի հետ տիրեց ընդհանուր խառնակութիւնը։ Ինչպէս ասում են՝ ալչունը էլ իր տիրոջը չէր ճանաչում։ Ամեն մարդ գլուխը կորցրել էր։ Միայն էֆէնդին զգաստ էր, միայն նա իրան պահել էր իմանում։ Այդ միջոցին գրասում հաւաքված կնիկների և աղջիկների բազմութիւնը համարձակութիւն ստացաւ, և կամաց կամաց ներս մտնելով, նրանք նստեցին Սուսանի և վառվառէի մօտ, և սկսեցին ալնտեղից լսել երաժիշտներին։

—Պար, պար, բացականչեց էֆէնդին ծախ տարով,—պար եմ ուզում։

Այդ միջոցին դրացի Օհան, որ հաղիւ կարողանում էր իրան ոտքի վրա պահել, վերկացաւ, և հանդիսականների միջից բռնելով երկու փոքրիկ աղջիկների ձեռքից, համարեա զօռով քարշ տուեց, աղջիկների ձեռքից, համարեա զօռով քարշ տուեց, աղջիկների ձեռքից, համարեա զօռով քարշ տուեց, վերջապես սկսեցին պարել։

—Շաքաչ, շաքաչ *) գոռում էին երաժիշտները, ուելի թունդ կերպով ածելով։

Եւ էֆէնդին գնում էր միմիր ածածի դրամ պարողների ափի մէջ, նրանք տալիս էին երաժիշտներին։

Պարը, որպէս սովորաբար լինում է, սկսվեցաւ փոքրիկ աղջիկներից և հետզհետէ հանդիսական ուելի հասակաւորները։ Ուսաջին զոյգը յոգնելուց յետոյ իրանց ձեռքի թաշկինակները ձգեցին ուրիշ երկու աղջկայ վրա, այդ նշան էր, որ այժմ նրանքը պէտք է պարէին։ Այսպէս հերթը հետզհետէ փոխվում էր, և ամեն անդամ մէջ էին մտնում մի զոյգ պարողներ։ Էֆէնդին առատութեամբ մի զոյգ պարողներ։ Էֆէնդին առատութեամբ լցնում էր նրանց բուռը ածածի ոչաքաներով, և երաժիշտները եռանդով ածում էին։

Հերթը հասաւ վառվառէին։ Գեղեցիկ աղջիկը նայում է։ Ամեն մարդ գլուխը կորցրել էր։ Միայն էֆէնդին զգաստ էր, միայն նա իրան պահել էր իմանում։ Այդ միջոցին գրասում հաւաքված կնիկների և աղջիկների բազմութիւնը համարձակութիւն ստացաւ, և կամաց կամաց ներս մտնելով, նրանք նստեցին Սուսանի և վառվառէի մօտ, և սկսեցին ալնտեղից լսել երաժիշտներին։

—Պար, պար, բացականչեց էֆէնդին ծախ տարով,—պար եմ ուզում։

Այդ միջոցին դրացի Օհան, որ հաղիւ կարողանում էր իրան ոտքի վրա պահել, վերկացաւ, և հանդիսականների միջից բռնելով երկու փոքրիկ աղջիկների ձեռքից, համարեա զօռով քարշ տուեց, աղջիկների ձեռքից, համարեա զօռով քարշ տուեց, վերջապես սկսեցին պարել։

—Շաքաչ, շաքաչ *) գոռում էին երաժիշտները, ուելի թունդ կերպով ածելով։

Եւ էֆէնդին գնում էր միմիր ածածի դրամ պարողների ափի մէջ, նրանք տալիս էին երաժիշտներին։

Պարը, որպէս սովորաբար լինում է, սկսվեցաւ փոքրիկ աղջիկներից և հետզհետէ հանդիսական ուելի հասակաւորները։ Ուսաջին զոյգը յոգնելուց յետոյ իրանց ձեռքի թաշկինակները ձգեցին ուրիշ երկու աղջկայ վրա, այդ նշան էր, որ այժմ նրանքը պէտք է պարէին։ Այսպէս հերթը հետզհետէ փոխվում էր, և ամեն անդամ մէջ էին մտնում մի զոյգ պարողներ։ Էֆէնդին առատութեամբ լցնում էր նրանց բուռը ածածի ոչաքաներով, և երաժիշտները եռանդով ածում էին։

Հերթը հասաւ վառվառէին։ Գեղեցիկ աղջիկը գերազանցից բոլորից իր չնորհալի պարով։ Նրա ամեն մէկ չարժումների մէջ նշմարվում էր գրաձիայ և կանարդիկ հրապուրանք։

—Մեր երկրում, խոսեց էֆէնդին, հայերի մէջ մի լաւ սովորութիւն կայ, երբ աղջիկը իր պարը վերջացնում է, մտանում է տան պատուաւոր տիրոջ, չքնում է նրա առջև, գլուխը դնում է նրա ծնկի վրա, և այդքան ժամանակ չէ բարձրացնում, մինչև նրանից մի լաւ ընծայ չէ ստանում *)։

—Այդ չատ լաւ սովորութիւն է, ձայն տուեցին երաժիշտները,—պէտք է այստեղ էլ մտնել այդ սովորութիւնը։

—Լաւ-լաւ է, դու պիտի լինես առաջին օրինակը, ասաց նրան էֆէնդին.—դէ, մտեցիր, գնա։

Վառվառէն ամոթխածութիւնից բոլորովին չը փոթվեցաւ և անշարժ մնաց իր տեղում։ Նա ուելի բարձր էր համարում, որ դեմքը պատռվէ և իրան կուլ տայ, քան թէ գլուխը մի օտար մարդու գրկումը դնէ։ Բայց ամեն կողմից նրան բրթեցին, քաշքշեցին, ասելով, գաղջի, գնա, մի ամաչիր, քեզ բան կը ասչ—և վերջապէս նրան ուժով տարան էֆէնդու մօտ, և նա ստիպվեցաւ իր գեղեցիկ գլուխը գնել էֆէնդու ծնկների վրա։ Էֆէնդին փայփայեց վառվառէի սիրուն գլխակները և գրեց նրա ափի մէջ երկու ոսկի։

Մինչ էֆէնդին այսպիսի քէֆերով էր զբաղված, ներս մտաւ նրա զարմիկներից մէկը, մտաւոր, և ականջին ասաց. «այն մարդին, որի համար պատրաստ էիք, գտանք»—«Լաւ նստեցէք», և ամենայն զգուշութեամբ պահեցէք, մինչև ես առաջուան դրութեան կանգնեմ, հրամայեց էֆէնդին անլսելի ձայնով։

Զարմիկն հեռացաւ։

Ինչ մարդու համար էր այդ կարգադրութիւնը,—ոչ ոք չը հասկացաւ։

Արդէն գլուխից բաւական անցել էր։ Արենաստաւոր Պետրոսի խրթիթը փոքր առ փոքր դատարկվեցաւ։ Երաժիշտները հեռացան։ Դրացի Օհանն արբեցութիւնից բոլորովին անզգայ իր տունը տարան։ Բազմութիւնը ցրվեցաւ։

Արենաստաւորի խրթիթի մէջ մնաց միայն պատուելի հիւրը զրերի հետ, որը այնքան խմել էր, որ ունեցած մի հատիկ աչքն էլ ոչինչ չէր տեսնում։ Սուսանը անկողին պատրաստեց էֆէնդու համար, հրաւիրեր հանգցրին և բոլորը հանգստացան։

Այն գիշերը ինչ էր պատահել,—Աստուած գիտէ, բայց առաւօտեան վառվառէն չատ տխուր էր, և արտասուքը խեղճ աղջկայ աչքերից մի քանի անգամ էր ցամքել...

Նոյն գիշերվայ առաւօտեան պահուն, գեղեցկը չը բացված, այս գիւղի մէջ կատարվեցաւ մի ուրիշ ցաւալի անցք. մի երիտասարդի չղթաներով կապած, տարան զինուորական գործակատարի մօտ, որ նոր եկել էր այս կողմերում պատերազմական կարգադրութիւնների համար։

Գիւղացիներից ոչ ոք չը տեսաւ նրան,—միայն Թօմաս էֆէնդին խաչի միջից, նրա եանից նայելով, մի առանձին գլուխի հրճուանքով ասում էր իր մտքում. «գնա այստեղից, որքան կարող ես, փչիր քո գուդուկը...»

Այդ երիտասարդը պ. Դաւդուկեանն էր, կամ մեր այժմեան պ. Սալմանը։

(Կը շարունակվի)

*) Շաքաչ նշ. այն ածածը, որ ստանում են պարողները հանդիսականներից և յետոյ տալիս են երաժիշտներին։

*) Հայաստանում ոչ մի տեղ չը կայ այսպիսի սովորութիւն. միայն ասիական բռչաների տղաները և կիներները պարելու ժամանակ գործ են դնում այս տեսակ հրապուրիչ ձևեր հանդիսականներից փող ստանալու համար։